դապետ (այժմ արքեպիսկոպոս) Սեդրակեանցին ուղարկում է Նուխի՝ «թէ տեղական վոխանորդի վրայ եղած դանգատներին վերահասու լինելու և թէ գաւառի եկեղեցիներին և ժողովրդին այցելութիւն անելու և դանազան գործեր կատարելու» (համար *)։ Անկեղծաբար պիտի խոստովանել, որ հայրենասէր երիտասարդ վարդապետը տեսնելով այդ դժբախտ երկրի վերին աստիճանի յետ ինացած և ողբալի վիճակը, հետաւոտութեամբ և լրջմտութեամբ մի լաւ քայլ է անում, այն է՝ Ուտիախաօս Նիժ աւանից չորս, իսկ Զուղու և Մերզաբէկլու իրար կից թրքախաօս Հայադաւան գիւղերից ընտրում և ուղարկում է ս. Էջմիածնի ժառանգաւորաց հոգ. դպրոց մի-մի սրամիտ, ձայնեղ և քաջառողջ Հայ պատանիներ, որ գնան և սովորեն մայրենի հայերէն լեզուն և ապա վերադառնալով իրենց հայրենիք՝ քահ. լինին **)։ Գեր. Տ. Արիստ. արքեպ. Սեդրակ. սրբազանի երկասիրած «Քահ. խնդիր» գրքի 6 և 7-րդ երեսներում ուղարկուած պատանիների մասին, ցաւելով պիտի ասել, սպրդել են հետեւեալ անճիշտ տողերը.—«Չորս երէխաներն ընտրուեցին և ուղարկուեցին, բայց Մայր Աթոռի ժառանգաւորաց դպրոցից դուրս գալուց յետոյ նրանք փոխանակ իրենց հայրենական գիւղում քահ. լինելու, մէկը քահանայացաւ Թիֆլիզում և միւսներն էլ ընտրեցին ուրիշ տեղեր և պարապմունքներ»։

---

*) «Քահանայական խնդիր», տես, երես 2—3։

**) «Քահ. խնդիր», տես, երես 6—7։